



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

« 02 » 05 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0074-23

Ձեռնարկողը՝

«Աքսես Բոնասայթ» ՍՊԸ

ք. Երևան, 2-րդ Աղյուսագործների փ., փուլ 48

Գործունեությունը՝

**Ստեփանավան խոշորացված համայնքի Ուրասար
բնակավայրում 106 հա տարածքների անտառապատման
ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ**

Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0074 - 23

« 02 » 05 2023թ.

**Լոռու մարզի Ստեփանավան խոշորացված համայնքի Ուրասար
բնակավայրում 106 հա տարածքների անտառապատման ծրագրի ծրագրի
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայր**

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Աքսես Բոնասայթ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայր
Գործունեության կատեգորիա՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Լոռու մարզի Ստեփանավան համայնքի, Ուրասար բնակավայր

«Էյ-Թի-Փի» հիմնադրամի կողմից 2023թ. գարնանը և աշնանը նախատեսվում է իրականացնել Լոռու մարզի Ուրասար բնակավայրի տարածքում 106 հա տարածքների անտառապատում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 5) կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Համայնքային անտառտնկման համար նախատեսված տարածքները գտնվում են Ուրասար համայնքից դեպի հյուսիս-արևմուտք մոտ 4 կմ հեռավորության վրա: Ուրասար բնակավայրը գտնվում է Ստեփանավան քաղաքից 7 կմ արևմուտք, Ձորագետ գետի աջ կողմում, Բազումի լեռնաշղթային հյուսիս-արևելյան լանջերին, Ձորագետի և դրա վտակների ջրհավաքում: Լեռնագրական առումով այն պատկանում է Չքնաղ լեռներին, որը Բազումի լեռնահամակարգի կենտրոնական մասում է: Չքնաղ լեռները ձգվում են հյուսիս-արևմուտքում Հեղեղուտ լեռնանցքից մինչև հարավ-արևելք՝ Չքնաղ գետի ակունքները 15 կմ երկարությամբ: Ամենաբարձր գագաթը համանուն լեռն է (2837 մ), Արևաշող գյուղից 6 կմ հյուսիս:

Հայցվող տարածքը գտնվում է վերին լեռնային գոտում 1700-1850մ բարձրությունների վրա և իր վրա կրում է գրեթե բոլոր էկոլոգիական, կլիմայական փոփոխությունները: Մասնավորապես հարավային կողմնադրության լաջերում նկատվում է Լոռու երկույթներ, հիմնականում անասնատեղափոխման և գեր արածեցված հատվածներում: Անտառապատման համար նախատեսված տարածքներում ծառերը և թփերը բացակայում են:



Համաձայն նախնական գնահատման հայտի /այսուհետ՝ հայտ/ ընտրված տարածքներն ըստ նպատակային նշանակության հանդիսանում են գյուղատնտեսական նշանակության հողեր, գործառնական նշանակության հիմնականում արոտավայր է (փոքր հատվածը խոտհարք է), սակայն, որպես բնական կերհանդակ՝ արոտավայր կամ խոտհարք, ունեն շատ ցածր արդյունավետություն:

Ընտրված 106 հա տարածքը կազմված է երկու տարածքներից՝ Ուրասար-1՝ 55 հա և Ուրասար-2՝ 51 հա, որոնք գտնվում են Ուրասար-Կաթնաղբյուր գյուղերի միջնամասում: Դրանք բնակավայրերը միացնող ճանապարհի հարակից երկու բլուրներ են, որոնք միմյանցից բաժանվում են հովիտով: Այդ հովտի հատակով անցնում է Ձորագետի աջակողմյան Խորգետակ վտակի սնող բամաթիվ առուներից մեկը:

Անտառտնկման համար նախատեսված տարածքներն ընդգրկում են հիշյալ բլրակներից առաջինն՝ առանց հյուսիս-արևմտյան լանջի ներքին մասի, իսկ երկրորդն՝ ամբողջությամբ:

Ուրասար-1՝ 55 հա ընդհանուր մակերեսով տարածվում է 1660 – 1845 մ բացարձակ նիշերի միջև: Բլրի արևմտյան ուղղությամբ 1790 – 1845 մ բարձրություններում մինչև 520 մ երկարությամբ տարածվող լանջը մեղմաթեք է՝ մոտ 6° ընդհանուր թեքությամբ, իսկ հանդիպակաց՝ արևելյան լանջի երկարությունը հասնում է մինչև 590 մ, տարածվում է 1655 – 1845 մ բարձրություններում և ունի մոտ 17° ընդհանուր թեքություն: Հարավային՝ 1690 – 1845 մ նիշերում տարածվող լանջն ունի մինչև 447 մ երկարություն, որի ընդհանուր թեքությունը հասնում է մոտ 20°, իսկ համանման՝ 19° ընդհանուր թեքությամբ հանդիպակաց հյուսիսային լանջը տարածված է 1660 – 1845 մ բարձրություններում, ձգվում է մինչև 534 մ երկարությամբ:

Ուրասար-2՝ 51 հա մակերեսով տարածվում է 1620 – 1775 մ բացարձակ նիշերի միջև: Արևմտյան ուղղությամբ 1720 – 1775 մ բարձրություններում տարածվող մինչև 432 մ երկարությամբ լանջը մեղմաթեք է՝ մոտ 7° ընդհանուր թեքությամբ, արևելքում 1640 – 1775 նիշերի միջև մինչև 426 մ երկարությամբ տարածվող լանջի ընդհանուր թեքությունը զգալի է՝ մոտ 18°: Հարավում 424 մ երկարությամբ, 1650 – 1775 բարձրաչափական նիշերի միջև տարածվող լանջն ունի մոտ 16° ընդհանուր թեքություն, հանդիպակաց՝ հյուսիսային լանջ, որը մինչև 412 մ երկարությամբ տարածվում է 1635 – 1775 մ բարձրություններում, մոտ 19° ընդհանուր թեքության է:

Անտառտնկման համար ընտրված Ուրասար համայնքի տարածքներն ընկած են բարեխառն, ամբողջ տարին համեմատաբար խոնավ կլիմայով գոտում: Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին կազմում է 14 – 16°C, հունվարին՝ -4 – -5°C: Առավելագույնը ջերմաստիճանը հասնում է +36°C, բացարձակ նվազագույնը՝ -30°C:

Հողի մակերևույթին անսառնամանիքային ժամանակաշրջանի տևողությունը կազմում է 139 օր, որն սկսվում է մայիսի երկրորդ տասնօրյակից և շարունակվում մինչև հոկտեմբեր: Կայուն ձյունածածկույթով ժամանակաշրջանի տևողությունը 65 օր է: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 670 մմ, որից վեգետացիայի շրջանում՝ 530 մմ: Քամու միջին արագությունը կազմում է 1,6 մ/վ:

Տարածքները ջրաբանական առումով ընկած են Ձորագետի աջակողմյան՝ Խորգետակ վտակի վերին և միջին ավազանի սահմաններում: Վերջինս միախառնվելով Չքնաղ գետին միախառնվում է Ձորագետին:

Հողածածկը՝ խորքային եռացող միջին հումուսացված, միջին հզորության կավավազային թույլ էրոզացված և խճաքարային միջին հումուսացված, սակավազոր կավավազային-ավազակավային միջին և ուժեղ էրոզացված կրազերծ, կարբոնատազերծ սևահողեր են:



լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները կատարվելու են անտառվերականգնման տարածքից հեռու, բեռնատար մեքենաների սեփականատերի սեփական տարածքներում:

- Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց պոլիէթիլենային տոպրակների մեջ (մինչև 35լ տարողությամբ):

- Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:

- Սննդային կամ դեղագործական նպատակներով բուսատեսակների հավաքի արգելում և այլն:

Պատճառաբանական եզրահանգումներ. Ամփոփելով կարելի է եզրահանգել, որ նախագծի իրականացման արդյունքում անտառածածկ տարածքների հիմնումը շրջակա միջավայրի վրա կունենա դրական ազդեցություն՝ ինչպես բնապահպանական, այնպես էլ սանիտարահիգիենիկ տեսանկյունից: Լոռու մարզի Ուրասար բնակավայրում ընտրված անտառտնկման տարածքում ծառային բուսականությունն արգելափակում է: Անտառազուրկ է ոչ միայն տնկման համար ընտրված տարածքը, այլև գյուղի ողջ վարչական տարածքը: Այս առումով անտառային զանգվածների հիմնումը տվյալ տարածքում բարենպաստ ազդեցություն կունենա ամբողջ լանդշաֆտային համալիրի և դրա առանձին բաղադրիչների վրա:

Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Լոռու մարզպետարանը: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Ստեփանավան համայնքի Ուրասար բնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել:

Փորձաքննական պահանջ

Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական, հրդեհաանվտանգության և սանիտարական նորմերի պահպանմանը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Աքսես Բոնասայթ» ՍՊԸ կողմից ներկայացված Լոռու մարզի Ստեփանավան խոշորացված համայնքի Ուրասար բնակավայրում 106 հա տարածքների անտառապատման ծրագրի նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ գլխ. մասնագետ



Արմինե Վարդանյան